

## ԷՋԵՐ ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆԻՆ ՅՐԱՆՏ ԱՊՐԵՍՅԱՆԻ ԳՐԱԾ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Գրականագետ Էդվարդ Ջրբաշյանի կապերը միութենական գրական շրջանակների հետ բավական լայն էին և բազմաբնույթ: Իր գիտական գործունեության ընթացքում նա մշտապես առնչվում էր Մոսկվայի և այլ խոշոր քաղաքների (Լենինգրադ, Թբիլիսի, Կիև, Վիլնյուս, Տարտու, Կաունաս) նշանավոր գիտնականների հետ, հաճախ նրան հրավիրում էին գիտաժողովների կամ դասախոսությունների, տեղի էին ունենում նաև փոխադարձ այցելություններ Երևան: Կապը հատկապես Մոսկվայի և Լենինգրադի գիտնականների հետ մշտական էր. իր բազմազբաղ գործունեության ընթացքում Ջրբաշյանը տարիներ գոմե մեկ անգամ ժամանակ էր գտնում այցելելու այդ քաղաքները՝ դրանով իսկ ապահովելով գրական և գիտական առնչությունների այն մթնոլորտը, որը նա անհրաժեշտ էր համարում գրականագիտական մտքի զարգացման համար: Նրա մտերիմների մեջ պետք է հատկապես նշել անվանի փիլիսոփա և գեղագետ, հայազգի Գրանտ Զաքարի Ապրեսյանին (1903-1982), որի հետ 1960-ական թթ. կեսերին ձևավորված գիտական կապերն աստիճանաբար վերածվեցին ջերմ և մտերմիկ բարեկամության շարունակվելով մինչև մոսկվաբնակ գիտնականի կյանքի ավարտը: Ծնված լինելով Շամշադինի Պառավաքար գյուղում Ապրեսյանը բարձրագույն կրթություն էր ստացել Ռուսաստանում, 1947 թվականից դասավանդում էր Մոսկվայի տարբեր բուհերում: Նա փիլիսոփայական գիտությունների դոկտոր էր, պրոֆեսոր: Նրա աշխատանքները վերաբերում են անդրկովկասյան և հայ գեղագիտական մտքի պատմությանը, հռետորական արվեստի և տեսության հարցերին: Դեղինակն է «Հայ գեղագիտական մտքի պատմությունից» ռուսերեն երկհատոր աշխատության (Ереван, 1973, 1977):

Զնայած տարիքային մեծ տարբերությանը (Ապրեսյանը Ջրբաշյանից մեծ էր ճիշտ քսան տարով) կար ինչպես փոխադարձ մեծ պատկառանք, այնպես էլ եղբայրական ջերմություն, որը ձևավորվել էր երկար տարիների գիտական և անձնական շփումների ընթացքում: Էդ. Ջրբաշյանի նախածեռնությամբ Գ. Ապրեսյանի մի շարք հոդվածներ տպագրվեցին Հայաստանի գիտական պարբերականներում, նա դարձավ հայտնի և փնտրված անուն Երևանում, նրա հոդվածներն ու գրքերը սկսեցին գրախոսվել հայկական մամուլում: Մյուս կողմից, Ջրբաշյանը հատուկ հոգ էր տանում, որ հայազգի գիտնականը մշտապես զգա իր հայրենի գիտության և գրականության զարկերակը, ծանոթ լինի նոր հրապարակումներին և գրքերին: Ջրբաշյանի հիմնադրած և խմբագրած «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսը կարճ ժամանակում դարձավ Գ. Ապրեսյանի սիրելի պարբերականը: Շատ նամակներում նա կիսում է իր տպավորությունները հանդեսի այս կամ այն հրապարակման կամ հոդվածի առիթով, նշում որևէ նյութի արժեքավոր և ուսանելի լինելը, հաճախ անհանգստանում, որ հանդեսը ժամանակին չի հասնում Մոսկվա և այլն: Եվ ինքը՝ Ապրեսյանը, նույնպես դարձել էր «Բան-

բերի» մշտական հեղինակներից մեկը:

Երկու նշանավոր գիտնականների նամակագրությունը շատ հարուստ է և բազմաբնույթ. այստեղ արծարծված են ինչպես գիտական, այնպես էլ հասարակական և անձնական բնույթի խնդիրներ, որոնց հետ ծանոթությունը թույլ է տալիս հստակ պատկերացում կազմելու նրանց գիտական նախասիրությունների, մարդկային որակների և անձնական տարաբնույթ շփումների մասին: Ջրբաշյանի արխիվում պահպանվել են Դ. Ապրեսյանից ստացված հարյուրից ավելի նամակներ, որոնց զգալի մասը վերաբերում է Մոսկվայում և Դայաստանում տիրող գիտական ու գրական մթնոլորտին, հայ պարբերականներում Ապրեսյանի տպագրած հոդվածներին, հայ մի շարք գիտնականների աշխատություններին և այլն:

Ստորև հրապարակում ենք մի քանի նամակ որոշ կրճատումներով: Ողջույնի և հրաժեշտի խոսքերը միտումնավոր բաց են թողնված նամակներից, որոնք սովորաբար սկսվում են «Սիրելի Էդվարդ» կամ «Թանկագին Էդվարդ» և ավարտվում «Բարևներով քո Դ. Ապրեսյան», «Ջերմ բարևներով Դ. Ապրեսյան» և նման արտահայտություններով: Նամակները գրեթե առանց բացառության գրված են Մոսկվայից:

Պետք է նշել նաև, որ Դ. Ապրեսյանը, երկար տարիներ ապրելով Դայաստանից հեռու և լինելով ռուսագիր հեղինակ, իր նամակներում երբեմն թույլ է տալիս լեզվական անհարթություններ. մենք հավատարիմ ենք մնացել բնագրին: 1960-ական թթ. մի շարք նամակներ գրված են ռուսերեն, այնուհետև նա անցնում է հայերենի (կարելի է ենթադրել՝ Ջրբաշյանի խնդրանքով): Արդեն 70-ական թթ. նամակների լեզուն ավելի հարթ է, ավելի վարժ և սահուն, ինչը արդյունք էր հայ շրջանակների հետ երկարատև շփումների:

Սույն հրապարակման միջոցով փորձ է արվում վերականգնել այն մթնոլորտը, որի մեջ ապրում և գործում էին երկու նշանավոր գիտնականները, տալ նրանց տարաբնույթ կապերի, գիտական ոգևորությունների ու փնտրտուքների հնարավորինս ամբողջական պատկերը:

## **ԱՇԽԵՆ ՋՐԲԱՇՅԱՆ**

... Ուղարկում եմ խոստացած հոդվածը: Մի քիչ ուշացրի՝ անհետաձգելի գործեր ունեի՝ ներիր:

Վերջապես ուսումնասիրեցի «Աշխարհայացք և վարպետություն» գիրքը, որի մեջ զետեղված հոդվածների մեծամասնությունը կարդացվեց ամենայն հետաքրքրությամբ: Ես նորից համոզվեցի այն բանում, որ հանդերձ քեզ արդի գրականությունը, անշուշտ, ունի խոր և տաղանդավոր տեսաբան: Քո շատ գործերում կան թե՛ էսթետիկա և թե՛ գրականագիտություն:

Քեզ ավելի հաջողված են հայկական գրականությանը նվիրված հոդվածները: Սրանց մեջ ես կուզեի նշել նախ և առաջ Ե. Չարենցի մասին գրածները, հետաքրքիր են «Մի թեմայի երեք լուծում» և «Ակսել Բակունցի անավարտ վեպը Աբովյանի մասին» հետազոտությունները: Նորարարական դրույթներ կան Ա. Շիրվանզադեի ռեալիզմի վերաբերյալ հոդվածում և ուրիշ գործերում...

18/III 1968

... Շատ մեծ ուշադրությամբ ես կարդացի քո «Բանբերի» այս տարվա առաջին համարը: Պետք է ասել, որ հետաքրքիր հոդվածներ և ուրիշ բովանդակալի գործեր եք գետեղել այս հանդեսում: Այդ պատճառով չգիտեմ ո՞ր աշխատության մասին լավ խոսք ասեմ. Աշոտ Յովհաննիսյանի<sup>1</sup>, Մ. Մկրյանի<sup>2</sup>, թե՞ Է. Ջրբաշյանի: Առաջին հոդվածում շատ փաստերով ցուցադրվել են Ռաֆֆու և Արծրունու բարդ հարաբերությունները: Նրանց մեջ ամենակարևորն այն փաստն է, որ Ռաֆֆին ճշգրիտ բնութագրված է ինչպես իր ժամանակի ազնիվ և նպատակասլաց դեմոկրատ:

Քո հոդվածն ես ընդունեցի ինչպես մի լուրջ և կարևոր հետազոտության հակիրճ շարադրություն: Հիշեցնելով Մ. Աբեղյանի մեծ վաստակը դեպի հայ ժողովուրդը՝ դու միաժամանակ նոր մտքերով լուսաբանեցիր նրա լեզվաբանական ջանքերն ու նվաճումները: Ես չեմ տարակուսում, որ քո նոր ու ծավալուն աշխատությունը կլինի այդ երևույթի մասին:

Հ. Գաբրիելյանի հոդվածում արծարծված է շատ կարևոր հարց: Գիտնականն իրավացի է, քանի որ ապացուցում է ազգի ձևավորման և նրա հատկանիշների զանազանությունը:

/.../ Մի խոսքով, «Բանբերը» հետաքրքիր և անհրաժեշտ հանդես է: Թող հաջող ընթանան դրա գործերն ապագայում, խելոքացնի իր ընթերցողներին և ուրախացնի խմբ. կոլեգիային...

13/VIII 68

Ստացա թե՛ «Բանբերը» և թե՛ իմ հոդվածի առանձնատիպը: Շատ և շատ շնորհակալ եմ քեզնից: Կարդացի, /.../ միայն մի տեղում գտա փոքրիկ վրիպում. ինձ թվում է, որ այդ հրատարակությունը պետք է հետաքրքրի գոնե մեր բանասերներին:

Ի միջի այլոց, դու սխալվում ես՝ կարծելով, որ այդ հոդվածն իմ առաջին հրատարակությունն է Հայաստանում: Երկու գրական հոդվածներ են լույս ընծայվել. երևանյան «Коммунист»-ում (1958) և մամակ (հայերեն) համալսարանի լրագրում Մ. Մելիքյանի<sup>1</sup> գրքի մասին: «Պատմա-բանասիրական» հանդեսում (1964) - «К вопросу об истории эстетической мысли Закавказья» և համալսարանի «Տեղեկագրում»՝ «Идея красоты и вопросы искусства в трудах Мовсеса Хоренаци»: Իսկ եթե խորասուզվեմ պատմության մեջ, կարող եմ ասել, որ իմ անդրանիկ հոդվածները («Հրանտ Նորունի» ստորագրությամբ) լույս տեսան 1922 թվի հոկտեմբեր-նոյեմբերին «Խորհրդային Հայաստանում»...

/.../ Այժմ ես լարված աշխատում եմ «История армянской эстетики» գրքի վրա: Որոշել եմ այդ պատմությունը երկարացնել (լայնացնելով)՝ սկսելով շարադրանքը ոչ թե 5-րդ (ոսկե) դարից, ինչպես նախատեսել էի, այլ մինչ մեր թվարկության VII-ի դարերից, այսինքն՝ հայ ժողովուրդի կազմավորման ժամանակից: Համոզված եմ, որ այդպես ավելի հետաքրքիր կլինի: Մանրամասնությունները՝ Երևանում...

14/IX 68

<sup>1</sup> Մելիքյան Մեհենդակ (1918-1993), փիլ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ: 1967-1973 թթ. ԵՊՀ պրոռեկտոր, 1983-1986 թթ. փիլիսոփայության և սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան:

... Երեկ ստացա քո գրախոսականը և նամակը: Շնորհակալ եմ քեզանից, /.../ գրել ես բարյացական, բովանդակալի և լավ: Համաձայն եմ քննադատական նկատողություններիդ և միաժամանակ ուզում եմ ասել, որ քննադատելու ավելի շատ տեղեր կան իմ գրքում:

Կաշխատեմ իմ նոր գրքում հաշվի առնել քո դիտողությունները և վերացնել որոշ թերություններ: Ինչպես ինձ թվում է, «История армянской эстетики» հաջող է առաջ ընթանում: Հույս ունեմ, որ մայիսին կներկայացնեմ ձեզ: Կարծում եմ, որ այս նոր աշխատությունը կհաջողվի կատարել ավելի խոր բովանդակությամբ, մեծածավալով և հարուստ փաստերով: Շատ կցանկանայի, որ գիրքս ոչ միայն գեղարվեստորեն ձևավորված լինի, այլև հարստացված մի քանի հին հայքի քարտեզներով, պատկերներով և ուրիշ լուսանկարներով: Ստաժիր այդ ուղղությամբ. ավելի մանրամասնորեն կգրեմ գործս ավարտելուց հետո:

«Բանբերի» երրորդ համարում ինձ հետաքրքրող շատ հոդվածներ գտա: Ամենայն ուշադրությամբ ընթերցեցի Հ. Գաբրիելյանի աշխատությունը<sup>2</sup>, որում նա փաստորեն ամփոփում է իր երկար տարիներում ուսումնասիրված և մի շարք գրքերում լուսաբանված հայ փիլիսոփայության պատմությունը: Ինձ համար նոր փաստեր գտա Ն. Թահմիզյանի, Ս. Մելիք-Բախշյանի, Ա. Բաբայանի և ուրիշների հոդվածներում: Լուրջ հարց ես դու առաջադրել և մասամբ լուսաբանել քո հոդվածում՝ շարունակելով հետազոտություններդ սիրվածդ Հովհ. Թումանյանի բազմակողմանի ստեղծագործություններում: Ընդհանրապես պետք է ասեմ, որ «Բանբերը» /.../ այժմ ներկայանում է սովետահայ լավագույն պարբերականներից մեկը:

27/III 69

Նոյեմբերի 10-ին ստացա ձեռագիրս և նամակդ: Կարիք չկա ասելու, որ շատ շնորհակալ եմ քեզանից քո բարեկամական հոգատարության համար: Թե՛ Վաչեին և թե՛ Սերգեյին<sup>3</sup> անձամբ ասացի, որ ընդունում եմ նրանց համարյա բոլոր նկատողություններն ու առաջարկությունները: Նույնը կրկնում եմ քո բովանդակալի և բարեմաղթական նամակի կապացությամբ: Կարող եք չտարակուսել, որ ես շատ եմ ուզում, որ իմ նոր գիրքը՝ բաղձանքներիցս մեկը, ստացվի հետաքրքիր:

Ինչ վերաբերում է գրքի վերնագրին, պետք է ասեմ՝ երևի կթողնեմ «История армянской эстетики», քանի որ «Очерки» շատ շատերի գրքերն են «զարդարել»: «История эстетической мысли Армении» չեմ կարող ընդունել, որովհետև «мысль» արդեն օգտագործված է իմ «Эстетическая мысль народов Закавказья» աշխատությունում: Բացի այդ, չե՞ որ մեր գեղագիտական միտքը զարգացել է ոչ միայն բուն Հայաստանում, հետևաբար, ավելի ուղիղ կլինի, ինչպես ինձ առաջարկել է Չալոյանը<sup>4</sup>, եթե ասենք «армянская эстетика», բայց ոչ թե «эстетика Армении»:

Չալոյանից դեռ չեմ ստացել նրա կարծիքը: Հույս ունեմ, որ նա էլ կա-

<sup>2</sup> Տե՛ս Հ. Գաբրիելյան, Հայ փիլիսոփայական մտքի պատմական ընթացքը, 1968, հ. 3, էջ 15-37:

<sup>3</sup> Խոսքը գրականագետներ ակադ. Վաչե Նալբանդյանի և պրոֆ. Սերգեյ Դարոնյանի մասին է:

<sup>4</sup> Չալոյան Վազգեն (1905-1981), փիլիսոփայական գիտ. դոկտոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ: Դավիթ Անիադթի փիլիսոփայության առաջին ուսումնասիրողներից է:

առաջարկի շատ բաներ: Ստանալուն պես կանցնեմ աշխատանքիս նոր շրջանը: Ճիշտն ասած, չգիտեմ՝ ինչպես կընթանա այդ գործը. հոգիս հանում են ամեն կողմից, ժամանակ չի մնում իմ աշխատությունների համար:  
11/XI 69

Խնդրում եմ, առանց հետաձգելու հաղորդես ինձ. «Вопросы литературы»-ի ո՞ր համարում է գետեղված քո «Թունանյանի պոեմները» գրքի գրախոսականը: Հայտնի՞ր նաև Երևանյան մամուլի գրախոսականների մասին:

Շատ խնդրում եմ նեղություն քաշես և զանգահարես Լ. Հախվերդյանին. «Вопросы литературы»-ի ո՞ր համարում է գրված նրա «Թունանյանի աշխարհ»-ի մասին, ե՞րբ է լույս տեսել դրա հայերեն տարբերակը, կա՞րողյոք զանազանություն դրա և ռուսերեն հրատարակված տարբերակի մեջ: Ներիր իմ այս խնդրանքը. Հախվերդյանի հասցեն չունեմ:

Այդ տեղեկություններն անհրաժեշտ են իմ թունանյանագիտական գրքերին նվիրված հոդվածի համար:

Այսօր Պարուլրից ստացա «Սայաթ-Նովա»-ն և ջերմ շնորհավորեցի նրան:  
7/XII 69

... Մոտ օրերս վերջացնում եմ աշխատության վերամշակումն ու ամբողջ խմբագրությունը: Միաժամանակ արտատպում եմ հույս ունենալով, որ մայիսի առաջին տասնօրյակին կուղարկեմ ձեռագիրս «Հայաստանի» համար: Պետք է ասեմ, որ մեծ աշխատանք կատարեցի՝ հաշվի առնելով ձեր (եռյակի) և Չալոյանի իրավացի նկատողություններն ու առաջարկությունները: Նորից ուսումնասիրեցի զանազան գրքեր և վկայագրություններ, կրճատեցի շատ գրականագիտական և լեզվաբանական էջեր՝ մի մամուլից ավելի շատ: Որոշեցի ընդունել քո առաջարկությունը՝ վերնագրելով գործս այսպես. «Очерки истории армянской эстетической мысли»:

/.../ Ստացա «Բանբեր»-ը (ըստ բաժանորդագրության), հետո՝ հեղինակային համարը և հոդվածիս առանձնատիպը: Շնորհակալ եմ քեզանից, նամանավանդ հոդվածս տպագրելու համար: Իհարկե, «Բանբերը» կարդացի՝ առանձին հետաքրքրությամբ կոմիտասյան նյութերը, Ն. Անանյանի, Է. Հակոբյանի և Վ. Ներսիսյանի հոդվածները: Ինձ համար հետաքրքիր էր նամանավանդ Ա. Մադոյանի «Առաքել Սյունեցու բանաստեղծությունները», որից մի քանի տեղեկություններ և դիտողություններ օգտագործեցի իմ աշխատության համար: Մի խոսքով, ամեն անգամ մեծ անհամբերությամբ եմ սպասում «Բանբեր»-ի հաջորդ համարին և ստանալով հետաձգում եմ ամեն բան՝ ընթերցելով քո հետաքրքիր հանդեսը...

10/IV 70

Ստացանք Սայաթ-Նովայի և Եկմալյանի ժողովածուները, «Բանբերի» 2 ու 3 համարները և քո նամակը:

/.../ «Բանբերը» պարունակում է հետաքրքիր հոդվածներ և նյութեր: Մասնավորապես կան այնպիսի գործեր, որոնք կօգնեն ինձ մի քանի կարևոր հարցերի պարզաբանմանը, եթե ես կարողանամ շարունակել հայ գեղագիտության պատմության հետազոտությունը:

/.../ Քո հոդվածը «Գրական ժանրերի հիմնական չափանիշների մա-

սին» կարդացի անմիջապես: Հիշեցի քո մի քանի դատողությունները Թումանյանի բալլադների վերաբերմամբ և հասկացա, որ վաղուց ես զբաղված ժանրերի հարցով: Համաձայն եմ քո հիմնական դրույթների հետ. նամանավանդ ժանրերի այն սահմանազատման և բնութագրման հետ, որը դու տալիս ես երեք չափանիշի առանձնացման կապակցությամբ: Լավ է, որ ասված է նաև հայ գրականության մասին, և համոզիչ է այն գիծը՝ Արվյան – Պռոշյան – Ռաֆֆի – Շիրվանզադե – Օտյան – Չարենց, որ դու նշում ես՝ ապացուցելով, որ ժանրային օրինաչափությունները հնտորեն գործադրվել են մեր գրականությունում: Այդ կապակցությամբ լավ կլիներ հիշել, որ Մ. Նալբանդյանը՝ նամանավանդ «Կրիտիկա» հոդվածում, Ռաֆֆին՝ վեպին նվիրված հոդվածներում, Ստ. Պալասանյանը՝ «Հայոց գրական պատմություն»-ում և ուրիշները տեսաբանորեն են մոտեցել ժանրերի հարցին և, անշուշտ, աջակցել (հայ իրականությունում) այդ կատեգորիայի տեսության զարգացմանը: Եթե այդ հանգամանքն արտացոլվեր քո հոդվածում (ժողովածուի տարբերակում), լավ կլինի:

«Գրական թերթում» կարդացի քո հոդվածը Արամ Ինճիկյանի մասին և նրան ուղարկեցի իմ շնորհավորականը: Հույս ունեմ, որ եթե BAK-ը դեռ չի հաստատել նրա գործը, շուտով կհաստատի: Արամը վաղուց է արժանի դոկտորական աստիճանի...

22/1 1971

...Ամբողջովին համաձայն եմ քեզ հետ և համոզված, որ մեր ժողովուրդը չէր զրկվի Պարույրից, եթե այլ կերպ՝ ավելի մարդավարի դասավորված լինեին մեր հայրենիքում հասարակական հարաբերությունները, աշխատանքի և վաստակի գնահատումը: Ձզվելի է տեսնել կամ զգալ մարդկանց վարկաբեկող երևույթներ և փաստեր, անտանելի է լսել կաշառակերության և կաշառակերների մասին: Ամեն անգամ սիրտս շուռ է գալիս՝ տեսնելով՝ ինչպես շատ շատերի մեջ կարիերիստությունն ու եսասիրությունը մի տեսակի կուռք են դարձել:

Շնորհակալությամբ եմ ընդունում քո բարեկամական խոսքերը իմ հայագիտական աշխատանքների մասին: Ծիշտն ասած, հունիսից հետո ո՛չ «Հայաստանից» և ո՛չ էլ Ս. Դարոնյանից լուրեր չեն ստացել, բայց հույս ունեմ, որ աշխատությունս, իրավ, լույս կտեսնի 1972 թվին: Այդ հավատքով ոգևորված՝ արդեն սկսել եմ ջանքեր թափել երկրորդ գիրքը գլուխ բերելու համար: Ժամանակ չկա. ամեն տեղից վրաս եմ թափում զանազան գործեր, չնայած նրան, որ մեր ինստիտուտում էլ հարկավոր է ամեն գործ իր ժամանակին կատարել: Աշխատում եմ մեծ ցանկությունով և համարյա թե ամեն օր: Համենայն դեպս, այդ գործը իմ հոգսերի մեջ առաջին տեղն է գրավում: Առայժմ ունեմ անհրաժեշտ գրականություն. երևի մինչև գարունը ապահովված կլինեմ, հետո՝ կտեսնենք: Մի քանի պրոբլեմների վերլուծման և պարզաբանման գործում ինձ լավ օգնեց «Բանբերը»:

Ի միջի այլոց, ես այս տարի չբաժանորդագրվեցի այդ հանդեսին, քանի որ անցյալ տարի, ինչպես բաժանորդ, չստացա երկու համար: Օգնեցիր դու, մի համարն էլ ես գնեցի Երևանում: Հետևապես, եթե ուղարկես խոստացածդ, կաջակցես աշխատանքիս:

Մնում է ասել, որ դու ամիսներով չլռես՝ գիտենալով, որ ամեն մի ազ-

նիվ երևանցու նամակը ինձ համար ուրախություն է: Լավ ուրախացրին մեզ սուհուրկյանցիները Մոսկվա բերած ներկայացումներով: Եղանք բուլոր բենադրություններում: Հրաշալի տպավորություններ թողեցին և՛ հայերի, և՛ ռուս նայողների վրա...

18/IX 71

Ստացա «Բանբեր»-ը և նամակդ. շնորհակալ եմ, ինչպես և բաժանորդագրության համար: Թերթեցի հանդեսը, որում գտա մի քանի հոդվածներ և այլ նյութեր՝ ինձ համար հետաքրքիր: Ընդհանրապես պետք է ասեմ, որ «Բանբեր»-ը բազմակողմանի, խոր հետազոտող և լուրջ հրատարակություն է և իր որակով չի զիջում մի որևէ մոսկովյան ակադեմիական ամսագրի: Ցանկանում եմ քեզ և խմբ. կոլեգիային նորանոր հաջողություններ այդ հարկավոր գործում:

Նամակդ վկայում է, որ դու շատ լավ աշխատել ես թե՛ ինչպես կազմակերպիչ ու խմբագիր և թե՛ ինչպես հեղինակ: Ուրախ եմ, որ լույս կտեսնի հայերեն «Գրականագիտական բառարան». դրա կարիքը վաղուց է զգացվում: Շատ զոհ եմ, առանձնապես նրանով, որ նոր հրատարակությամբ լույս կտեսնի քո հանրածանոթ և բովանդակալի «Գրականության տեսություն»-ը: Ասում ես՝ այդ աշխատությունում շատ բաներ արդեն հնացել են, բայց սխալվում ես: Ոչ թե դրանք են հնացել, այլ ժամանակը, գիտությունն է առաջ գնացել, իսկ նրանց հետ՝ և հեղինակը: Եթե հեղինակը չառաջադիմեր, չխորանար գրականագիտությունում, անշուշտ, չէր նկատի իր գրքում «հնացած» մտքեր և ամփոփումներ: Ինձ մնում է նոր հաջողություն ցանկանալ քեզ. չեմ տարակուսում, որ այդ լուրջ մենագրության 3-րդ հրատարակությունը նույնպես լավ կընդունվի հասարակության կողմից, ինչպես ընդունվեցին 1-ին և 2-րդ հրատարակությունները:

Իմ հայագիտական աշխատանքի նոր շրջանի մասին քեզ արդեն գրել եմ, ավելացնելու բան առայժմ չունեմ: Կարող եմ միայն ասել, որ խորանալով հետազոտությունում՝ ավելի պարզ եմ ներկայացնում այն բազմաթիվ դժվարությունները, բարդությունները, որոնք աստիճանաբար ծագելու են իմ ճանապարհին: Օրից օր հանգում եմ այն համոզմունքին, որ իմ «Ուրվագծերի» երկրորդ գիրքը իրականացնելու գործում իմ դրությունը ոչ թե հեշտ, այլ գուցե ավելի դժվար լինի:

11/XI 71

...Ուշադրությամբ ծանոթացա «Բանբերի» 1-ին և 2-րդ համարների հետ: Առաջին գրքում ինձ հետաքրքրեց Մ. Մկրյանի հոդվածը՝ «Վեճը ավարտված չէ», որում նա փաստորեն շարունակում է իր վաղեմի դրույթների և մտքերի լուսաբանումը, բայց, այնուամենայնիվ, նորարական եզրակացությունների չի գալիս: Երկրորդ հանդեսում, որում գերազանցում են լեզվաբանական հոդվածները ի հաշիվ պատմաբանական, փիլիսոփայական և գրականագիտական թեմաների, քո բովանդակալի հոդվածը բալլադի մասին ես հասկացա ինչպես լուրջ շարունակություն և խորացում քո մի քանի տարի առաջ նախածեռնած հետազոտության: Համենայն դեպս, եթե համենատեղս քո այն դրույթների հետ, որոնք առաջարկել և մեկնաբանել էիր Հ. Թումանյանի բալլադներն ուսումնասիրելիս, կարելի է ասել, որ այդ գործում առաջ ես գնացել և, ինչպես համոզված եմ, գրական-տեսաբանա-

կան այդ աշխատությունում կհասնես լավ արդյունքների:

/.../ Մի խոսքով, եթե չերկարացնեմ, նորից կարող եմ խոստովանել. «Բանբերդ» շատ հետաքրքիր փաստեր և մտքեր է տալիս ինձ: Մաղթենք նրա մշակներին առաջադիմություն այդ ոչ հեշտ, լուրջ և արժանի հրատարակությունում...

24/1 72

Նախ շնորհակալ եմ քեզանից քո դեպի իմ եղբայր Վահրամի հիշատակի հոգատարության վերաբերմամբ: Այդ կապակցությամբ ակտիվացել է իմ և Վաչեի նամակագրությունը: Ես նրան նորից գրեցի իսահակյանական ժողովածուի մասին և միաժամանակ հարց դրի. անկախ նրանից, կանցնի Վահրամի հիշողությունը ժողովածուում, թե ոչ, այդ բանն այնքան լավ է գրված, որ կարելի է հրատարակել կամ «Лит. Армения»-ում, կամ «Սովետական գրականություն»-ում՝ թարգմանված: Գուցե դո՞ւ, ինչպես այդ հանդեսի խմբ. կոլեգիայի անդամ, կարողանաս աջակցել այդ գործին:

Խոսք չկա, Վահրամին այնքան էլ լավ չգիտեին Հայաստանում, այնուամենայնիվ գոնե ի պատիվ վարպետի հիշատակի «Исаакян - собеседник» տպագրեն: Օբյեկտիվորեն պետք է ասեն. լավ է գրված, խելացի, գեղարվեստորեն ու հետաքրքիր: Այդ վկայում է և Վաչեն, որը կարդացել և շատ գոհ է մնացել ձեռագրից:

Վահրամի վախճանը բոլորովին անսպասելի էր ինձ համար: Շատ գործեր թողեց անավարտ, և հիմա ես իմ պարտքն եմ համարում զբաղվել նրա ժառանգությունով: Որոշ բաներ նախաձեռնել եմ այստեղ. ի՞նչ կստացվի՝ առայժմ դժվար է ասել:

Վեց Ապրեսյան եղբայրներից<sup>5</sup> մնացի ես և Ստեփանը՝ մեր կրտսերը, որ արդեն յոթ տարի է աշխատում է Պրագայում, «Проблемы мира и социализма» ամսագրում՝ թարգմանիչ, տիրապետում է մի քանի տասնյակ լեզուների: Ուզում է վերադառնալ Մոսկվա, սակայն չեն ազատում. անփոխարինելի է:

Քո տողերը իմ հոր «Նոր-Դար»-վա հողվածաշարի մասին ինձ ուրախացրին և հուզեցին: Հայրս, ինչպես ես գիտեի, թղթակցում էր առավելապես «Մշակում», եթե չեն սխալվում «Տարագում»: «Նոր-Դար»-ը այդ կապացությամբ ինձ համար բոլորովին նորություն է:

Իմ հոր մասին կարող եմ պատմել անվերջ: Ջոռով, խաբեբայություններով, հակառակ իր կամքի 25-26 տարեկան հասակում ձեռնադրվել էր որպես Ղազախի քահանա, սակայն ուսուցչություն էր անում երեք պետ. դպրոցում՝ միաժամանակ գլխավորելով ծխական դպրոցը: Չանազան ձիրքերով օժտված մարդ էր, գրող, լրագրող, հռետոր, լավ ձայնի տեր և երգող: Թառ նվագող, նկարող, դուրզարության և մի քանի այլ փեշակություններով տանը զբաղվող, հասարակական գործիչ, շատ և շատ բարեգործական ձեռնարկություններ նախաձեռնող և ղեկավար:

<sup>5</sup> Եղբայրներից մեկը՝ Դերենիկը (1899-1939), եղել է խորհրդային պետանվտանգության գեներալ-մայոր, 1937-1938 թթ.՝ Ուզբեկստանի ներքին գործերի նախարար: Բռնադատվել և գնդակահարվել է, հետմահու արդարացվել: Նրա որդին՝ Յուրի Ապրեսյանը, խորհրդային և ռուս լեզվաբանության նշանավոր դեմքերից մեկն է, ՌԳԱ ակադեմիկոս (1992), զբաղվել է կառուցվածքային լեզվաբանությամբ և տեսական իմաստաբանությամբ, համահեղինակ է անգլերեն-ռուսերեն մի շարք նշանավոր բառարանների:



Մտերիմ բարեկամ էր Հարություն քահանա ճյուղուրյանի և գյուղագիր Արշակ Սրայայանի հետ, անձամբ ծանոթ էր Հովհ. Թումանյանի հետ, վերջինս երկու անգամ եղել է մեր տանը՝ Ղազախում: Հորս գիտեր Ավ. Իսահակյանը, ճանաչում էին բառարանագիր Դադբաշյանն ու այլ հայտնի մարդիկ: 1905 թվին, ինչպես հեղափոխական՝ հալածանքի ենթարկվեց և ստիպված էր փախչել Տփղիս՝ մինչև Նիկոլայ II-ի «Манифест»-ը: Տանը սեփական գրադարան ուներ (նախ՝ հայ դասականների երկերից), ստանում էր զանազան հայկ. պարբերականներ և իր հաշվով ընթերցանություն էր տարածում հայերի մեջ:

Հեղափոխությունն ընդունեց մեծ ոգևորությամբ, ընտրվեց Ղազախի գավառի գործադիր կոմիտեի անդամ: Սովետական իշխանությունը (Իջևվանում, ուր մենք գաղթել էինք) հաստատվելու օրերից նորից դարձավ աշխարհական և անցավ ուսուցչության: Հատուկ նամակով «Խորհրդային Հայաստանի» միջոցով դիմեց հայ հոգևորականներին՝ աջակցել նոր կարգերի հաստատմանը, բայց նրա կոչը, չգիտեմ ինչ պատճառով, լույս չտեսավ: Երևանում դեռ կան իջևանցիներ, որոնք լավ են հիշում Ջաքար Ապրեսյանին:

Ողբերգական էր նրա կյանքը: Դեռ երիտասարդ տղամարդ՝ զրկվեց կնոջից. մայրս մահացավ հանկարծակի 39 տարեկան հասակում, իսկ հայրս ստիպված եղավ հրաժարվել շատ-շատ գործերից, հեռանալ հասարակական ասպարեզից, որպեսզի մեն-մենակ դաստիարակի իր որդիներին: Մահացավ 52 տարեկան հասակում Նոր Նախիջևանում, ուր մենք տեղափոխվել էինք 1924 թվին՝ փրկվելով սովից: Այնտեղ էլ հայ գերեզմանատնում թաղվեց:

Նորից եմ կրկնում. վերին աստիճանի հետաքրքիր անձնավորություն էր հայրս, և եթե ինձ վիճակվի սկսել վաղուց, շատ վաղուց ինձ ծանրաբեռնող հուշերս, անպայման կպատմեմ Շամշադինի Պառավաքար գյուղի Ջաքար Ապրեսյանի մասին...

Տեսնում ես, սիրելի եղվարդ, ինչպես հուզեցին ինձ քո տողերը «Նոր-Դար»-ի մասին: Չկարողացա զսպել ինձ:

21/V 74

... Նախ շատ ու շատ զգացված եմ քո ուշադրությունով և հրաշալի գրախոսականով: Այդպիսի հանգամանորեն, տեսության բարձր մակարդակի վրա շարադրված, մեթոդաբանական տեսակետից պատճառաբանված, գործնական և բարյացակամ ոգով գրված գրախոսական մեծ ու շատ ցանկալի օգնություն է հեղինակի համար: Ընդունիր իմ խորին շնորհակալությունը՝ համոզված լինելով, որ դու հույժ կարևոր օգնություն հասցրիր ինձ:

/.../ Իհարկե, մինչև քո նամակն ու գրախոսականը ես խորհում էի և որոշ բաներ արդեն արել եմ, իսկ հիմա, հիմնվելով քո դիտողությունների վրա, գործս ավելի արագ կկատարեմ:

/.../ Եթե Դարոնյանը ստանձնի իմ խմբագրի պարտականությունները և կարողանա հոկտեմբերի ընթացքում ծանոթանալ վերանշակված ձեռագրիս հետ, իհարկե, շատ լավ կաջակցի ինձ: Այդ բանի մասին գրում եմ նրան, բայց չգիտենալով հասցեն՝ ստիպված եմ խնդրել քեզ գցել նամակս փոստարկղը՝ նախօրոք ծանոթանալով դրա բովանդակության հետ...

8/VIII 75

Ես արդեն գրել եմ, որ մինչև քո գրախոսականը սկսել էի ձեռագրիս վերամշակումը: Գրախոսականդ իր ժամանակին հասավ ինձ և գործս հեշտացրեց ու արագացրեց: Մի քանի օր սրանից առաջ Գ. Հակոբյանը բերեց ձեռագիրս քո նկատողություններով և մակագրություններով: Ծանոթացա դրանց հետ ևս. համարյա թե բոլորն էլ ընդունեցի և նորից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում քեզ: Օգնում ես ինձ այնպես, ինչպես միայն ազնիվ բարեկամը կարող է օգնել:

/.../ Աշխատանքս լավ է ընթանում. իհարկե, ամենադժվարը վերջին գլխի վերամշակումն է. ինչպես դու ես խորհուրդ տվել, դա վերածում եմ երկու գլխի՝ լայնացնելով այն էջերը, որոնք նվիրված են Տերտերյանին, Չոպանյանին, Լեոյին և Սոլովյանին: Միաժամանակ որոշ էջեր՝ նամանավանդ արվեստի մասին, կրճատում եմ: Ընդհանուր առմամբ մի երեք մանուլ արդեն կրճատել եմ՝ ի հաշիվ ընդհանուր (և լավ հայտնի) փաստերի, երևույթների և կրկնողությունների:

Հույս ունեմ, որ մինչև այս ամսվա վերջը կավարտեմ նոր տարբերակը /.../: Մտադիր ենք Երևան ժամանել հոկտեմբերի 7-ին:

13/IX 75

Մի քանի օր սրանից առաջ իմացա Աբեղյանի ինստիտուտում կատարված փոփոխությունների մասին<sup>6</sup>: Առնվազն մի 10 անգամ փորձեցինք հեռախոսով կապվել քեզ հետ՝ տանը, սակայն ապարդյուն: Այսօր Այվազյանից<sup>7</sup> ստացա նամակ, որում կա որոշ մանրամասնություններ վերոհիշյալ փաստի մասին: Ինձ մնում է սրտանց շնորհավորել քեզ՝ ինստիտուտի նոր դիրեկտորին, և ասել. արժանի ես այդ առաջաքաշմանը և, համոզված եմ, գործերդ կվարես ինչպես հարկավոր է: Իհարկե, ամենակարևորը կուլեկտիվում առողջ մթնոլորտի ապահովումն է: Այդ էլ կհաջողվի քեզ. դյուրալին այն բանն է, որ ինստիտուտի աշխատողներն են ուզեցել, որ դու լինես պատվական ինստիտուտի դիրեկտորը:

Ուրախ եմ, սակայն և մտահոգված. ինչպե՞ս կհամատեղես նոր պաշտոնդ քո այլ պարտականությունների հետ: Գլխավորը՝ առողջ լինես. «մնացածը» յուր կզմա...

Բուլղարիայում (ապրիլի 18-ից մինչև մայիսի 6-ը) մեծ և անսպասելի հաջողություններով անցկացան իմ դասախոսությունները և այլ գործեր: Ինձ պարզատրեցին ոսկյա նշանով և ընդհանրապես ամեն կողմից լավ վերաբերմունք ցուցաբերեցին դեպի ինձ և Յողիկը, որը, ի միջի այլոց, համերգ տվեց Տիրնովի համալսարանում, եղանք Սոֆիայում, Պլովդիվում, Գաբրովում, Տիրնովում, Օրյախովիցում՝ Բուլղարիայի ամենալավ ժամանակը: Շատ-շատ դեպքերում մեզ թվում էր, որ մենք Հայաստանում ենք. երկու երկրների մեջ շատ մանություն կա: Հյուրընկալվեցինք երկու հայկական ընտանիքներում, հիշեցինք Հայաստանը: Վերադարձանք վառ տպավորություններով...

17/V 77

<sup>6</sup> Խոսքը վերաբերում է Էդ. Ջրբաշյանի՝ 1977 թ. գարնանը ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի տնօրեն ընտրվելուն: Այդ պաշտոնը Ջրբաշյանը զբաղեցրեց ավելի քան քսաներկու տարի (1977-1999)՝ մինչև իր կյանքի վերջը:

<sup>7</sup> Այվազյան Ղազար (1913-1998), գրականագետ, այդ տարիներին ԵՊՀ հայագիտական կենտրոնում գրական կապերի բաժնի վարիչ:

/.../ Ստացա քո 12/VII նամակը «Միսաք Մեծարենց»-ի հետ և 24/VII նամակը. նախ շնորհակալ եմք (Ցողիկի հետ) քո այդ նվերի համար: Շատ ուրախ եմ, որ քեզ հաջողվել է այս աշխատության 2-րդ հրատարակությունը: Գիրքը կարդացի անմիջապես (Ցողիկը դեռ ընթերցում է) երկու օրվա ընթացքում և մեծ հաճությամբ: Առաջին և երկրորդ գլուխները գրված են գեղարվեստական ոճով և տեղին են՝ չեն հակաճառում աշխատության հետազոտական ոճին: Իսկ հետևյալ չորս գլուխը (76-184 էջ.) գրված են գրականագիտական բարձր մակարդակի վրա և նուրբ զգացմունքներով: Բազմազան վերլուծություններն ու մեկնաբանությունները համոզիչ են, թեպետ շարադրված են հակիրճ ձևով: Լավ ես արել՝ ընտրելով թեմա-պրոբլեմական մեթոդը. իմ կարծիքով, դա ամենաարդյունավետ մեթոդն է: Քեզ հաջողվել է ներկայացնել Մեծարենցին վառ գույներով և համոզիչ եզրակացումներով: Առավելապես հետաքրքիր են գրքի այն էջերը, որտեղ դու երիտասարդ բանաստեղծին համեմատում ես Սիամանթոյի և նամանավանդ՝ Տերյանի հետ: Լավ ես արել՝ քննադատելով Մեծարենցի հակառակորդներին և այսպես կոչված քննադատներին: Ցավոք սրտի, հայ հին քննադատությունը շատ և շատ դեպքերում հայիոյանքներ և քաղքենիություն է եղել՝ ուրիշ ոչինչ:

Միաժամանակ կուզեի ասել, որ խոսելով Մեծարենցի՝ բնությանը նվիրված տողերի մասին՝ լավ կլիներ ասել, որ բնության պոետիկացումը հայ հին քննադատության ավանդույթներից մեկն էր: Լավ կլիներ ավելի հանգամանորեն ասել Մեծարենցի և Բաշինջադյանի (56 էջ), ինչպես և Շիրվանզադեի բնափիլիսոփայական խոհերի կապի մասին:

Ես գիտեի, որ Մեծարենցը հայկական աստղերից մեկն էր, բայց քո գիրքը օգնեց ինձ ավելի պարզ տեսնել այդ աստղը: Չեմ տարակուսում, որ մամուլը համապատասխան ձևով կնշի քո այդ հին-նոր աշխատությունը...

19/VII 77

Մեծ հաճությամբ կարդացի 16/II «Գր. թերթի» էջը՝ նվիրված Յովհաննես Թումանյանին: Դու քո «Գրական ժառանգության անժանոթ էջերից», ինչպես կարծում եմ, ուրախացրիր ընթերցողների, նամանավանդ թումանյանասիրողների հոծ բազմության: Վերջապես ձեռնարկվել է գործ, որը վաղուց, շատ վաղուց պետք է կատարվեր:

Ուսումնասիրելով Թումանյանի չորսհատորյակը, հետո ծանոթանալով նրա վեցհատորյակի հետ՝ ես անբավարարություն էի զգում՝ գիտակցելով, որ այս ժողովածուները թերի են, հետևաբար հասարակայնությանը չեն ներկայացնում մեծ գրողին ո՛չ լրիվ, ո՛չ ամբողջովին: Այժմ, ինչպես կարող եմք դատել քո ներածական հոդվածի հիման վրա, Թումանյանը կներկայանա իր հայրենակիցներին 10 հատորանոց երկերով: Յուսանք, որ Աբեդյանի անվան ինստիտուտի ձեռնարկությունը կհաջողվի և կուրախացնի շատ շատերի: Ցանկանում եմ բոլորիդ, նամանավանդ քեզ մեծ հաջողություններ այդ արժանի գործում: Միաժամանակ կարծում եմ, որ լավ բան կանեք, եթե ո՛չ միայն «Գր. թերթում» պարբերաբար հրատարակեք գրողի անժանոթ էջերից, իսկ նամականիից՝ գլխավորապես գրականության, արվեստի և ընդհանրապես հասարակական հարցերի վերաբերմամբ:

Լավ կլինի նաև, որպեսզի 10-հատորյակի մասին գոնե փոքր ինֆորմացիա տաք «Лит. газета»-ում...

26/II 79

Ստացա քո նոր տարվա նամակը. ուրախ եմ, որ քեզ հաջողվում է ինստիտուտի մթնոլորտը մաքրել՝ ղեկավարվելով գործնական, այլ ոչ բարեկամական սկզբունքներով: Թայֆայականությունը գիտնականների մեջ ևս (ինչպես և Սոսկվայում) ցավոք սրտի իրականություն է և արգասավոր աշխատանքի ամենամեծ կամ ուժեղ խոչընդոտներից մեկը: Հետևաբար, եթե քեզ արդեն հաջողվել է հասկացնել մարդկանց, որ «так дело не пойдет», կարող ես ասել՝ դիրեկտորական առաջին քայլերը լավ ես արել: Չեմ տարակուսում, որ բռնած դիրքդ կպահպանվի և կամրացվի: Ցանկանում եմք հաստատականություն և հաջողություններ:

/.../ Ո՞վ է հիմա «Բանբերի» խմբագիրը. կուզեի շարունակել իմ առնչությունը այդ հանդեսի հետ՝ տարին մի անգամ տալով հոդված...

9/1 78

**АШХЕН ДЖРБАШЯН – Фрагменты писем Гранта Апресяна к Эдварду Джрбашяну.** – Эдвард Джрбашян поддерживал связи со многими представителями российских литературных и научных кругов. Среди них следует отметить известного философа и эстетика Гранта Захаровича Апресяна (1903–1982). Сугубо научные связи между ними, установившиеся в середине 1960-х гг., постепенно переросли в тёплую дружбу, которая сохранилась до конца жизни московского учёного. Их переписка богата и многообразна, письма затрагивают вопросы как научного, так и общественного и личного характера. Знакомство с ними позволяет составить ясное представление о научных предпочтениях, человеческих качествах и семейных обстоятельствах их авторов. В публикации представлен ряд писем с определёнными сокращениями.

**ASHKHEN JRBASHYAN – Fragments of Hrant Apresyan's Letters to Edward Jrbashyan.** – Edward Jrbashyan maintained relations with many representatives of the Russian literary and scientific circles. Among them the famous philosopher and aesthete Hrant Zakharovich Apresyan (1903-1982) is worth mentioning. Purely scientific relations established between them in the mid-1960s gradually grew into a warm friendship that lasted till the end of Moscow scholar's life. Their correspondence is rich and varied; the letters touch upon issues of both public and personal character. The acquaintance with them helps make a clear conception of the scientific preferences, personal qualities and family circumstances of their authors. The publication contains a series of letters with certain abridgements.